Краснодарские респонденты были практически единодушны в оценке существования в обществе различных экстремистских националистических организаций. 84% заявили, что относятся к таким организациям резко отрицательно и что деятельность таких организаций должна преследоваться в уголовном порядке; 3% безразличны к таким организациям; 8% полагают, что в демократическом обществе каждый волен исповедовать любые взгляды; 4% затруднились с ответом. В то же время нужно указать на трудности анализа ответов на данный вопрос: существование экстремистские организации доминирующего в обществе большинства и такого же плана организации этнических меньшинств. Заявляя о своем отрицательном отношении к этническим радикалам, люди могли иметь в виду только организации большинства или только организации этнических меньшинств (последние тесно связаны с массовым сознанием с терроризмом).

Интересно, что студенты краснодарских вузов менее склонны к крайним суждениям по сравнению с общим массивом горожан. Для них характерно меньшее сочувствие, значительно меньшая «отрицательность» и большее безразличие к мигрантам. В целом, для студентов эта проблема просто менее важна. Что думают о своем положении в Краснодаре сами мигранты? Характеризуя проблемы, остающиеся до настоящего времени нерешенными, значительная часть опрошенных мигрантов заявила, что таких проблем нет – 43%. В то же время 19% полагают, что проблемой остаются жилищные условия; 17% - регистрация (прописка); работа – 10%. Можно предположить, что высокий уровень современной «беспроblemности» мигрантов связан с точкой отсчета в определении, что является проблемой. Приезжая на новое место жительства, мигранты в Краснодаре сталкиваются с очень большими трудностями. В связи с этим решение через несколько лет только ряда основных проблем может восприниматься как восстановление нормального (приемлемого) уровня жизни.

Структура источников доходов краснодарских мигрантов не отличается принципиально от структуры доходов местного старожильческого населения: для 51% основные источники доходов

семьи составляет работа по найму; для 11% - частное предпринимательство (в собственности находится фирма, кафе, ларек, мастерская и т.д.); для 23% - самостоятельная работа (покупка-продажа товара, ремонт квартир и др.); 11% - пенсия или пособие; 4% - помощь родственников; 4% - личное подсобное хозяйство.

Важной характеристикой положения мигрантов является доступность социальных услуг. Среди мигрантов, имеющих детей, которые хотели бы получить высшее образование, 38,7% заявили о наличии препятствия к этому. В качестве главной проблемы в получении высшего образования подавляющее большинство респондентов назвали материальные трудности – 91,7%. Лишь 8,3% указали на такие препятствия, как отсутствие паспорта, регистрации, гражданства.

Сложность с получением медицинской помощи испытывали 13% мигрантов, 55% таких проблем не испытывали и для 32% это не актуально.

Проблемы с оформлением пенсии были у 10% респондентов, 25% таких проблем не испытывали и для 65% это не актуально. Указавшие на наличие трудностей выделили следующие проблемы:

трудности с восстановлением документов – 70%;
все очень запутанно – 10%;
отсутствие прописки – 10%;
отсутствие гражданства – 10%.

В ходе нашего исследования 21% опрошенных мигрантов заявил о том, что испытывали дискриминацию по национальному признаку, 79% такой дискриминации не ощущали.

В качестве отражающих современный уровень интеграции мигрантов в Краснодаре можно рассматривать распределения ответов на вопрос «Если бы Вам пришлось начинать сначала, Вы бы переехали сюда вновь?»:

Таким образом, большинство опрошенных в целом удовлетворены своим положением в Краснодаре, или же расценивают его как лучшее по сравнению с положением мигрантов в других местах. При этом каждый четвертый мигрант считает свой выезд с прежнего места жительства ошибкой.

Один из главных выводов исследования в Краснодаре – представления о

они все...».⁸ В ходе массового социологического опроса населения Республики Адыгея, Краснодарского и Ставропольского краев, Ростовской области, проведенного в ходе того же проекта, была зафиксирована достаточно тесная взаимосвязь в общественном мнении миграционной и этнической тематики: отвечая на вопрос о способах решения проблем межнациональных отношений, 15,2% респондентов (четвертый по частоте выбор) отнесли к таким способам ограничение миграции.⁹ Среди респондентов, опрошенных на территории Краснодарского края, этот процент был еще выше – 20,6%.¹⁰

В ходе проведенного в 2004 году экспертного опроса «Миграция в Южном федеральном округе» (опрошено 308 экспертов из числа представителей органов государственной власти и местного самоуправления, руководителей некоммерческих организаций мигрантов, ученых, в том числе 23 эксперта в Краснодарском крае) было подтверждено, что миграция все еще воспринимается как острая социальная проблема, затрагивающая значительную часть населения региона.

Таким образом, можно констатировать наличие в массовом сознании населения края таких устойчивых представлений, как опасность миграции и большая роль миграции в изменении этнического состава населения.

Для понимания сути этого феномена необходим анализ механизмов формирования стереотипов по поводу миграции. Важнейшим из них является подача материалов на тему миграции в СМИ. Нами осуществлен анализ публикаций в кубанских газетах по данной тематике начиная с 1989 года, некоторые выводы которого представлен ниже.

¹ Итоги Всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю. Национальный состав и владение языками, гражданство. Т. 4. Краснодар. 2005. С. 7.

² То же. С. 223.

³ То же. С. 436.

⁴ Армяне на Кубани: мигранты или местные жители?//САР. №2 (141). 28.08.2007. С. 1.

⁵ Социально-экономическое положение Краснодарского края в 2006 году. Краснодар. 2007.

⁶ Петров В.Н., Ракачев В.Н., Ракачева Я.В., Черный В.И. Мигранты в Краснодарском крае: проблемы адаптации и формирования толерантной культуры. Краснодар. 2002; Савва М.В. Миграция в Южном федеральном округе//Этническая ситуация и конфликты в странах СНГ и Балтии. Ежегодный доклад Сети этнологического мониторинга, 2004. С. 61-81.

⁷ Савва М.В. Новые диаспоры Краснодарского края (права, интересы, динамика интеграции и восприятие местным сообществом). Краснодар. 2006. С. 11-22.

⁸ Отчет о проведении фокус-группового исследования «Диагностика состояния межнациональных отношений в городе Краснодаре»//Межнациональные отношения и становление гражданского общества на Юге России. Южный региональный ресурсный центр. Краснодар. 2002. С. 44.

⁹ Результаты социологического исследования состояния межэтнических отношений в регионе// Межнациональные отношения и становление гражданского общества на Юге России. ЮРПЦ. Краснодар. 2002. С. 23.

¹⁰ То же, С. 24.

Таблица 2. Оценка возможности переезда в Краснодар в случае, если бы пришлось начинать сначала (% от опрошенных)

№№	Варианты ответов	%
1	Переехал бы сюда вновь	67.0
2	Нет, остался бы на прежнем месте жительства	25.0
3	Уехал бы в другую страну	1.0
4	Затрудняюсь ответить	7.0

миграции высоко мифологизированы и существенно «отстали» от реальной ситуации.

Присутствующие в общественном мнении представления о влиянии миграции на социально-политическую и экономическую ситуацию в крае можно считать одним из главных региональных мифов. В ходе проведенного по методике М.В. Саввы в рамках проекта «Юг России – регион национального согласия и мира» исследования (2001г.) участники фокус-групп в Краснодаре заявляли: «В крае очень много беженцев, которые, естественно, добавляют местному населению проблем. Местные – живут в тех, старых домах, а вот, как правило, беженцы, которые отсюда пришли гольшом, через год-полтора, так получается, уже живут в нормальных домах», «Через пять лет заполнят

Արձակագիր, հրապարակախոս, Հայաստանի վաստակավոր լրագրող Մարգո Դուկասյանը ծնվել է 1927թ. Լենինականում (Գյումրի): 1941-ից բնակվում է Երևանում, 1950-ին ավարտել է Երևանի պետական լիցեյի քաղաքական ֆակուլտետը, աշխատել է «Պիոներ կանչ» թերթում, 1967-1998 թթ.՝ «Գաղուն» ամսագրում: Հրապարակել է շուրջ

480 հոդվածներ, ակնարկներ, ճամփորդական նոթեր և այլն: Նա 10 գրքի և բնագրական քննադատական 2 կինոսցենարի հեղինակ է: 1974-ին արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակին, իսկ 1985-ին՝ Հայաստանի գրողների միության Միքայել Նալբանդյանի անվան մրցանակին:

Արևմտյան Հայաստանի Բասեն գավառի ժողովուրդը 20-րդ դարակազմին երկու անգամ է գաղթել: Այդ էր պատճառը, որ ես, փոքր հասակում մայրիկիցս հաճախ էի լսում ինձ համար անհասկանալի «առաջի գաղթ», «ետի գաղթ» արտահայտությունները: Միայն ժամանակ անց պետք է հասկանայի, թե այդ մարդիկ՝ իմ նախնիները, որքան էին սիրում իրենց հո-

բանտ էին տարել, որտեղից նա այլևս դուրս չէր եկել, իսկ տատս՝ Եղիսաբեթը, վախճանվել էր տիֆից:

Եվ, պատկերացրեք, նրանց չորս դուստրերից երեքը՝ Յեղնարը, Վարսենիկը և Սոնան, Ավետիս հորեղբոր ընտանիքի հետ, կտրել-անցել էին մահով լի այդ ճամփան, և Անդրանիկ գորավարի առաջնորդությամբ հասել էին, որ անցնեն Պարսկաստան: Սակայն, այդ ժամանակ խոյի մոտերքում կռիվներ էին եղել: Չորս-

բերաններում տաք կարտոֆիլ լինել, արագ-արագ բլբլացնում էին: Ես ինձ կորցրել եմ, մոռացել եմ, որ գոնե գրպանիցս թուղթը հանեմ, մեկնունենիմ ցույց տամ: Հանկարծ մի մարդ մոտեցավ, երկի իր լեզվով հարցնում էր՝ այ քույր, ինչո՞ւ կուլաս: Ես ուներս բարձրացրի, իբր՝ ձեր խղճահարությունը էր մայրում ինձ: Երևի էլ էլ սիրտ տվեց, հիշեցի գրպանիս թուղթը: Ցույց տվեցի: Կարդաց, չորս բոլորը նայեց, մեկին ձեռքով արեց, իբր՝ մոտ արի: Մի ջահել տղա եկավ: Չգիտեմ ինչ խոսեցին, տղան վազելով գնաց: Քիչ հետո մի ուրիշ մարդու հետ վերադարձավ: Եղ մարդը ծիծաղում է, ձեռքերը թափահարում, հասկացնում է, որ լաց չլինեմ: Թուղթը վերցրեց, ասում է՝ Ծեբելդա, Անդրանիկ... գլխով է անում, իբր՝ գիտեմ, գիտեմ:

Ճամպուրկուս վերցրեց, կայարանից

ցել, որ տեսողությունը վատացել էր: Կվատանար, բա ի՞նչ կաներ, եղբան որ նա էր տառապել: Հա՛, չմոռանամ, որ մութն ընկնում էր, աչքիս կայծեր էին երևում: Ես վախեցած հարցնում էի՝ էս ի՞նչ է: «Գաժոռիգ ա, գաժոռիգ, վնաս չունի», - ասում էին: (Հետո մենք պարզեցինք, որ աչքին երևացածը կայծոռիկն էր, լուսատիկը):

Մորս գնալ-վերադառնալուց հետո սկսվեց նամակագրությունը: Մի տարի էլ չէր անցել, որ մորաքույրս հայտնեց՝ որոշել ենք տեղափոխվել Լենինական: Հանգիստը կորցրել էր: Հիմա էլ ինքն էր ձգտում դեպի մեծ քույրը:

Նախ եկավ փեսա Անդրանիկը: Տեսավ, որ կարելի է տուն վարձել, տեքստիլ կոմբինատում բոլորի համար աշխատանք գտնել: Մինչ «հետախուզում» էր պայմանները, ինձ համար մի նվազարան սարքեց, ներկեց, լաբեր ճարեց՝ ամեն ինչը տեղը տեղին:

Նվազարանի անունը քեմոնա էր, երեկոները դնում էր գրկին, նվագում էր ու երգում: Այնքա՛ն լավ էր ստացվում: Իսկ երբ ես էի փորձում ...

Իհարկե, նվագել չսովորեցի, բայց այդ գործիքը իմ մանկության թանկագին ունեցվածքը դարձավ: Քաղցր ծնօճնոցը դուր էր գալիս, կարծես ինչ որ մեկը խոսում էր ինձ հետ:

Փեսա Անդրանիկի գնալուց շատ ժամանակ չէր անցել, որ մենք դիմավորեցինք նրանց: Մորաքրոջ ընտանիքը, երկու երեխաներով՝ Տիրուհի և Անդրուշ, սկեսրայրի հետ: Վերջինս մի աշխույժ ծերունի էր, Բաբալ էին ասում: Չգիտեմ «պապ» բառի համաձայն ձևն էր, թե՞ անունն էր: Եկավ նա փեսա Անդրանիկի քրոջ ընտանիքը, երեք տղաների հետ:

Բաբալը շրջապատի ուրախությունն էր: Մարդկանց հավաքում էր շուրջը և հրաշքներ ցույց տալիս: Ասեղը բերանից մտցնում էր այտի մեջ և դրսից քաշում հանում: Մի կաթիլ արյուն չէր երևում: Ասում էին, որ տեքստիլում, պահակության ժամանակ պտտածողի վրա այնպիսի համարներ էր ցույց տալիս, էն էլ էդ տարիքին, որ բոլորն ապշում էին:

Ուրախ մարդիկ էին, կիրակի օրերին իրենց տներում միշտ երգ ու նվագ կար: Եղպես որոշ ժամանակ: Հետո երևի սկսեցին կարոտել իրենց Ծեբելդային, ցցերի վրա կանգնած տներին, մանդարինի ծառերին, մեղմ կլիմային: Լենինականի ցուրտն էլ գուցե մեղավոր էր, և սկսեցին տխրել:

Հիմա, այսքան տարի անց, հատ ու կտոր իմ հուշերը թղթին հանձնելիս, մտածում եմ՝ էս հայերը տաշեղի նման էս ինչքան ժամանակ է ջրի վրա օրորվում են, տեղից տեղ մետվում: Մի՞թե սա նրանից չէ, որ իրենց բնիկ հողից արմատներով հանվել, դուրս են շարժվել: Սիրտս ցավում է, քանի տասնամյակ է այս միտքն ինձ տանջում: Մի՞թե ազգովի մենք չենք գտնելու այնքան ուժ, որ մնացածներս, գոնե այս մի բուռ հայկական հողի վրա, արմատներով այնքան խորանանք, որ էլ ոչ մի, ոչ մի ուժ մեզ չկարողանա տեղաշարժել: Քանի որ, ժամանակ անց պարզվում է՝ գնացած նոր բնակավայրերում էլ դժվար է հիմնավորվելը:

Շարունակությունն էլ, բայց չկա այնպիսի մի բան, որ ընթերցողին ուրախացնի: Իմ մորաքրոջ և փեսա Անդրանիկի քրոջ ընտանիքները վերադարձան Արխագիա: Կարելի է ասել, որ դա տեղի ունեցավ 1941թ. Հայրենական պատերազմի նախօրեին: Փեսա Անդրանիկը մասնակցեց կռիվներին և եղավ առաջին զոհերից մեկը: Նրա որդին, որի անունը նույնպես Անդրանիկ էր, թեև Անդրուշ էին ասում, մեծացավ, տուն ու տեղ դրեց Սուխում քաղաքում:

Սրտի ցավով պետք է նշեմ, որ վրաց-աբխազական հակամարտության տարիներին, Սուխումի ռմբակոծության ժամանակ, նա էլ իր կնոջ հետ գոհվեց՝ շուկայից տուն վերադառնալու ճանապարհին:

Խեղճ իմ մորաքույր Հրանուշ, լավ էր այնքանով, որ նա չտեսավ որդու և հարսի գոհվելը, թոռների որբ մնալը:

Կուզենայի այս վերջաբանը գրած չլինեի, բայց դա չէր փոխի իրականությունը:

ՄՈՐԱՔՈՒՅՐ ՀՐԱՆՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Մորաքույր Հրանուշը

վարն, ստիպված, ինչպես մայրս էր ասում, քոչի գլուխը դարձրել էր դեպի ետ, դեպի Ձանգեզուր, ետևից տանելով հազարավոր գաղթականներին, այնտեղից հասել Ղարաքիլիսա, վերջը ցրվել են այս ու այն կողմ, իրենք հանգրվանել են Գյումրիում: Մորաքույրներիցս մեկը՝ ամենափոքրը, Հրանուշ անվամբ, այդ թոհուրեթի մեջ կորել էր անհետ:

Մայրս՝ Յեղնարը, երբեք հույսը չէր կտրում, որ օրերից մի օր իր քույրը գտնվելու է: Երբ այդ մասին խոսք էր բացվում, մենք ասում էինք՝ փոքր երեխա է եղել, հիմա մեծացել, փոխվել է, որ տեսնես էլ, չես ճանաչի:

Ի՞նչ էք ասում, այ՛բալա, որ տեսնեմ, անպայման կճանաչեմ: Նախ, արյունը կքաշի, - ասում էր, - երկրորդ, Հրանուշը ուշիմ երեխա էր, իր անունը, հորս ու մորս անունները մոռացած չի լինի:

Կար նաև երրորդ փաստարկը, որն ամենաուժեղն էր. երբ Հրանուշը ծաղիկով հիվանդացել էր, թեև ձեռքերը շորերով փաթաթել էին, բայց մի անգամ, գիշերը, ատամներով քանդել էր կապը ու քիթը քորել:

Հետքը մնացել էր: Ասում էին, որ ծաղիկի հետքը մինչև կյանքի վերջը մնում է մարդու դեմքին: Այ էդ նշանից էլ նա հույս ուներ ճանաչել իր քրոջը: Եթե, իհարկե, Աստված հանդիպեցներ:

Ժամանակ անցավ: 1930-ական թվականներին Լենինականում /այժմ Գյումրի/ գաղթի ժամանակ կորածների ցուցակներ էին երևացել: Բարի մարդիկ միշտ էլ եղել են: Տարբեր տեղերում հավաքել էին որբերին ու մանկատներում պահել: Մայրս լսել էր այդ մասին և մշտապես հետամուտ էր լինում, ասելով, թե Աստված մի դուռ կբանա:

Հույսն ու հավատը որքան մեծ բան են: Հետագայում պարզվեց, որ հայ որբերից շատերն ապաստան են գտել Վրաստանում: Պատկերացրեք, մորս տառապանքները վերջ գտան: 1937թ.-ին նա տեղեկացավ, որ Հրանուշ անունով մի որբ աղջիկ /մոտավորապես տարիքը համընկնում էր/, ամուսնացել է համաձայնաբեր Անդրանիկ Գոչյանի հետ և ապրում է Սուխումից ոչ հեռու, Ծեբելդա գյուղում:

- Գնալու եմ, որ գնալու եմ, - ոտքի ելավ մայրիկս, - այդ Հրանուշն իմ քույրն է լինելու, սիրտս վկայում է, - ասում էր նա:

Թեև ռուսերեն կամ վրացերեն մի բառ անգամ չգիտեր, բայց թղթի վրա ռուսերեն գրել տվեց՝ Սուխում - Ծեբելդա - Հրանուշ - Անդրանիկ Գոչյան, որեց գրպանը, և 1937 խառը և դաժան թվականին գնացքով ճամփա ընկավ:

Երբ վերադարձավ, մայրս պատմեց հետևյալը:

- Սուխումում գնացքից իջել, մոլորված կանգնել եմ: Արցունքները խեղդում են ինձ: Ճամպուրկը ձեռքիս, ոտքերս ոնց որ գետնին կպած լինեմ: Տեղիցս չեմ շարժվում, ու՛ր գնամ, ոչ ճամփա գիտեմ, ոչ լեզու: Մարդիկ խռնված, բեռներով, կապոցներով, արկղներով այս ու այն կողմ են շտապում: Դրանց լեզուն էլ՝ կարծես

դուրս եկանք: Տարավ մի բեռնատար ավտոյի կողքը կանգնեցրեց: Վարորդի հետ խոսեց, ինձ հասկացրեց՝ բարձրացի, մատի: Ուրախ ժպտով ինձ հրաժեշտ տվեց, գնաց: Երևի կայարանի աշխատողներից էր: Հաստատ չիմացա, բայց նրանից շատ շնորհակալ եմ:

Ավտոն մարդկանցով լցվեց, ճամփա ընկանք: Ի՞նչ ճամփա, ոլոր մոլոր պտտվում ենք. անտառներ, այգիներ, մանդարինի ծառեր ... Դե ես էլ, գիտեք, վատ եմ զգում, սիրտս խառնում է, աչքերս մթնում: Եղպես չգիտեմ ինչքան գնացինք, մեկ էլ էն եմ հիշում, որ քեռիցս բռնած օգնում են, որ ինձ ավտոյից իջեցնեն: Կանայք աղմուկում էին՝ Հրանուշ, Հրանուշ ... էլ բան չեմ հիշում: Չգիտեմ, թե ինչքան ժամանակ է անցել, զգացի, որ մեկը գլուխս



Մայրս՝ Յեղնար Դուկասյանը (մահացավ 91 տարեկանում):

բարձրացրել, թան է խմացնում: Երբ խելքս գլուխս եկավ, աչքերս բացեցի, տեսա թախտին պառկած եմ, մի կին կռացած դեմքիս է մայրս: Ես էլ նրան մայեցի, մեկ էլ քթի վրա նկատեցի փոսիկները, որ մնացել էին ծաղիկի հիվանդությունից: Բղավեցի՝ Հրանուշ, էդ դու՞ ես՝ իմ փոքր քույրը, ես էլ Հեղնարն եմ, քո մեծ քույրը: Փաթաթվել ենք իրար, լաց ենք լինում, ուրախությունից ենք լալիս: Ախր, քսան տարի էր անցել էն դաժան օրվանից:

Հիմա ես չեմ հիշում, թե մայրս որքան էր մնացել քրոջ մոտ, բայց որ վերադարձավ, երկար պատմում էր նրանց միտուկացի, իր հանդիպ ջերմ վերաբերմունքի մասին: Չարմուղել էր տների տեսքից: Չորս սյուն են տնկել, տունը վրան սարքել: Անտառի մեջ էին, ասում էր, երևի խոնավությունից խուսափելու համար: Մի մեծ կաթսայի մեջ էլ Հրանուշը առավոտյան եփպտացորենի ալյուրով թանձր խաշիկ էր եփում: Մամալիգ էին ասում: Մեզ համար անսովոր էր, բայց դա իրենց ամեն օրվա ուտելիքն էր:

Մայրս հանկարծ ընդհատում էր պատմությունը և ասում՝ այ՛բալա, խեղճ երեխան մեզ կորցնելուց հետո էնքան էր լա-

«ՄԱՅՐԻԿ, ՄԵՆՔ ՀԱՅ ԵՆՔ»

Հարցազրույց Ստամբուլի Կեոկիփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի ԳՐԻԳՈՐ ԱՂԱՔԱԼՕՂՆՈՒԻ հետ:



– **Վերապատուելի, խնդրում եմ պատմեք Ձեր մասին, ե՞րբ եւ որտե՞ղ էք ծնուել...**

– Ծնած եմ 1957թ. Արաբկիր քաղաքին մեջ...

– **Փաստորեն, եղե՞նից չորս տասնամեակ անց Արաբկիրում դեռ հայե՞ր կային: Ինչպե՞ս է փրկուել Ձեր ընտանիքը:**

– Միայն Արաբկիրին մեջ չէ, որ փրկուած հայեր կային: Այն ատենները կառավարութիւնը օրէնք հաներ է, թէ այն հայ ընտանիքները, ուր եզակի մասնագիտութեան վարպետներ կային, այդ ընտանիքները դուրս չհանեն: Դուռերու առջեւները նշաններ դրին, ըսին, որ այս մարդիկը



պետք չէ հանել: Մեր ընտանիքը այդպէս փրկուած է. մեր մէկ կողմը կենդանիներու բժիշկ է եղեր, միւս կողմը՝ շատ լաւ շինարար...

Մէկ մասն ալ կայ, որ ժողովուրդը սիրելով պահեր է: Ամեն քաղաքի մէջ այսպէս չէղաւ, սակայն քանի մը տեղեր պահուեցան:

Հինները կ'ըսէին, որ Արաբկիրի 100-էն 90-ը հայ են եղեր, բայց ջարդէն վերջ քիչ են մնացեր: Ես 1974 թ.-ին դուրս եկայ, 5-6 հայ ընտանիք կային, հիմա՝ մէկ ընտանիք:

Արաբկիր լիս է չկար, ես Մալաթիա գացի լիս սորվելու: Ես լաւ աշակերտ էի, բայց օր մը ուսուցիչը եկաւ եւ ըսաւ, թէ ինչպէս կըլլայ, որ կեանքը մուսուլմանէն աւելի միշտ ամեն, սկսաւ զարնել, ես ալ իրեն զարկեցի:

Մալաթիայի լիսէն աւարտեցի, վերջը Իստանբուլ եկայ, Իստանբուլի համալսարանը մտայ, սորվեցի լիսէի «Թուրքիայի պատմութեան ուսուցիչ» դասընթացը:

Կառավարութիւնէն գործ ուզեցի: Ինծի հետ աւարտողները աշխատանք գտան, սակայն ինծի ըսին, թէ տեղ չիկայ, երեւի հայ էի, անոր համար տեղ չիկար: Թերեւս կը մտածեին. ինչպե՞ս հայը թուրքիայի

պատմութիւն պիտի սորվեցնէ: Ստիպուած ոսկերչութիւն սորվեցայ: 10 տարի ոսկերչութիւն ըրի, 1987թ.-ին սկսեցայ Աստօնյ գործին մէջ մտնել, մեծ փորձութիւնէն յետոյ որոշեցի Աստօնու ծառայել:

– **Ի՞նչ փորձութիւն, կ'ատմե՞ք...**

– Մենք ընտանիքով թունաւորուեցանք, 2 երեխաներս՝ 6 եւ 3 տարեկան, կորսնցուցի, ես ու կինս փրկուեցանք: Տունին մէջ ածուխ կը վառէինք, ածուխի գազը ներս տուեր է, միւս օրը կէսօրէն վերջը ամենուս գտան մեր տունին մէջ, երեխաներս մեռած էին, ինծի ու կնոջս հիւանդանոց տարին:

Հիմա երկու երեխա ունիմ՝ 19 տարեկան աղջիկ եւ 16 տարեկան տղայ:

Այս կեանքը ինծի նուր է, պետք է Աստօնու ծառայեմ:

Արաբկիրի մէջ եկեղեցի չիկար, հայկական դպրոց չիկար, մէկը չիկար, որ մեզի սորվեցներ, գիտցներ Յիսուսի մասին: Երբ թուրքերէն կարողացի Աւետարանը, Քրիստոսի գորութիւնը տեսա, Քրիստոսի միջոցով յաւիտեանական կեանքը գիտցայ: Շատ հայեր կան, որ Քրիստոսի արիւնին գորութիւնը չեն գիտեր:

Շատ նեղութիւններ քաշեր էի Անատոլիայի մէջ, մեզի կեանքը կ'ըսէին: Հիմա, ըսի, գորաւոր գէնք կայ:

Ես հայերէն չէի գիտեր, 5 տարի եղաւ, որ այսչափ սորվեցայ: Արաբկիր մէկ բառ հայերէն կը խօսէինք, 2 բառ՝ թուրքերէն:

Ես Աւետարանը նոր կարողացած էի, մէկ անգամ Մենոպ սրբազանին ըսի, որ այս թիւ մէջ այսպէս գրուած է, ըսաւ. «Աւետարանականները այդպէս կը մտածեն, մենք՝ առաքելականներս, տարբեր կը մտածենք»: Գիտցայ, որ աւետարանականներ կան, գացի աւետարանականները գտայ Կեոկիփաշա, տեսայ մարդիկ սուրբ գիրք կը կարդան. ըսին՝ եկուր, նստէ, մենք ալ սերտորութիւն կ'ընենք: Այդ օրէն սկսեցայ երթալ Կեոկիփաշայի Հայ Աւետարանական եկեղեցի:

– **Երբ ձեռնադրուեցի՞ք:**

– Ես պատուելի ձեռնադրուեցայ 2002թ.-ին:

– **Վերապատուելի, քանի՞ հոգի է յաճախում Ձեր եկեղեցի:**

– Երբ ես գացի, 25 հոգի էր, հիմա, փառք Տիրոջը, ամառները 100 հոգի, ձմեռները 150 հոգի կը հաւաքուի: Ամեն ազգերէն կուգան: Մեր եկեղեցիի մէջ 4 լեզուով պաշտամունք կըլլայ, կիրակի օրերը՝ թուրքերէն, ռուսերէն, հայերէն, պարսկերէն: Ռուսերէն կ'ընենք, որովհետեւ տարբեր ռուսախօս երկիրներէն եկածներ կան: Մոլդովայէն եկածներու մէջ շատ են գազաուզները: Գազաուզները ծագումով

թուրք են, բայց քրիստոնէայ են, Իստանբուլ են եկեր աշխատանք ճարելու համար:

Կեսօրէն վերջ ժ. 2-ին հայաստանցի հայերու համար պաշտամունք կ'ընենք՝ մօտ 30 հոգի են:

Ժ. 5-ին կուգան պարսիկները, որ իսլամ են, եւ կ'ուզեն քրիստոնէայ դառնալ, կը մկրտենք, քրիստոնէայ կը դառնան, ուրիշ երկիրներ կ'երթան: Սերտորութիւն կ'ընեն: Պարսկաստան անոնք կը վախանան եկեղեցի երթալ:

– **Իսկ Ստամբուլում կան Թուրքիայի այլ քաղաքներում ուրիշ Ավետարանական եկեղեցիներ կ'ան:**



Կեոկիփաշայի Հայ Ավետարանական եկեղեցին:

– Իստամբուլի մէջ 20, Անկարա՝ 5, Իզմիր՝ 5, Ադանա՝ 2, Դիարբեքիր, Մերսին, Սամսուն՝ 1-ական թուրքական Աւետարանական եկեղեցիներ կան: Մէջերմին շատ հրաշքներ կ'ըլլան, հիւանդներ կը բուժուին, երազներ կը տեսնեն: Մէկ հոգի թուրք ռադիո բացեր է, թուրքերէն քարօզ կ'ըլլայ, լսողներու մեծամասնութիւնը իսլամ է:

– **Իսկ Թուրքիայի խորքերից իսլամ հայեր գալի՞ս են Ձեր մօտ քրիստոնէութիւն ընդունելու:**



– Գազաուզներէն իսլամացած հայեր կուգան Իստանբուլ, մէկ մասը քրիստոնէութիւն կ'ընդունի, ըսելով, որ մեր հայրերը վախէն իսլամ դարձեր են, հիմա ազատ ենք, քրիստոնէայ պիտի դառնանք, միւս

մասը կ'ըսէ, որ վախէն չէ, որ իսլամ դարձած են, որովհետեւ իսլամը ճիշտ ընդուներ են: Մէկ մասն ալ Անատոլիա կ'ապրին, իսլամացած են, կ'ըսեն մեր գիւղը հայ է, միւս գիւղն ալ հայ է, մենք իրարու աղջիկ կուտանք, որ դուրսէն մարդ չըմտնէ մեր մէջ, եթէ կռիւ ըլլայ, կ'ըսեն՝ «կեանքի չո՞ծուխ»: Մէկ մասը գիտեն, որ հայ են եղեր, բայց կը վախնան բարձրաձայն ըսել, մանաւանդ, եթէ պետական ծառայութեան մէջ են, կը վախնան, որ աշխատանքէն կը հանեն:

– **Վերապատուելի, խնդրում եմ իսլամ հայերի հետ հանդիպումների մի քանի դէպք պատմե՞ք:**

– Արդիւնի գյուղերէն մայրը եւ մօտ քսան տարեկան տղան եկեղեցի եկան, մայրը ըսաւ, որ տղայիս վրայ թուրք գրեց, ես, կ'ուզեմ, որ աղօթես: Այսպէս կ'ըլլայ, թուրքերը երբեմն հայկական եկեղեցի կուգան թուրք ու գիրի, իրենց հիւանդներու վրան աղօթելու համար: Այդ ժամանակ հայաստանցի մի քոյր ներս մտաւ, կարծ խօսեցանք, գնաց, այդ տղան ըսաւ.

– Խո՞ջա, դուն մեր լեզուն ուրկէ՞ գիտես:

– Այս լեզուն քու լեզո՞ւդ է,– հարցուցի ես:

– Այո՛, մեր գիւղի լեզուն է:

– Ուրեմն դո՞ւն ալ հայ ես,– ըսի ես:

– Ո՛չ,– ըսաւ,– հայ չեմ, այս մեր ծերերու լեզուն է:

– Չաւալս,– ըսի,– բոլոր գիւղերու մէջ թուրքերը թուրքերէն կը խօսին, ինչպէ՞ս է, որ ձեր գիւղի մէջ յատուկ լեզու կայ, ան ալ հայերէն:

Այդ ժամանակ տղան մայրիկին դարձաւ, հարցուց.

– Մայրի՛կ, մենք հա՞յ ենք: Մայրը ըսաւ.

– Տղա՛ս, չիտեմ, բայց աղ մեր լեզուն է:

Թէլէվիզիոնի վրայ հաղորդումներ կ'ըլլան կրօնական միւթերու շուրջ, երբեմն կը մասնակցին: Մէկը եկաւ, ըսաւ, որ քեզի տեսայ թիվի վրայ, արիւնս քաշեց, իմ նախնիները հայ են եղեր, քրիստոնէայ: Ըսի՝ պետք է քրիստոնէայ դառնաս, ըսաւ՝ ինչպէ՞ս դառնամ, պետական աշխատող եմ: Պատմեց, որ Խարբերդին մօտիկ երկու հայկական գիւղ կայ, բոլորը հայ են, հայերէն չիտեն, աղքատ են, Կ Պոլիս չեն կըրնար գալ եւ քրիստոնէութիւն ընդունիլ, իսկ ինչ կը վախնան կրօնափոխուիլ:

Թուրքիան ինչո՞ւ այդպէս կը վախնայ եւ հայերու դէմ կռիւ կ'ընէ, որովհետեւ գիտէ, որ կորսուած հայեր կան, կը վախնայ, որ այս մարդիկ կ'արթնան:

Օր մը Ամերիկայէն եկած պատուելի Պերճ Ծամպագեանին Իստամբուլ օդակայան պիտի ճամփայ դնէի, թաքսիի մէջ կը խօսէինք, շարժավարը հարցուց.

– Դուք հա՞յ եք:

Ես ալ ըսի.

– Դուն որտեղէ՞ն գիտցար, որ մեր լեզուն հայերէն է:

Ըսաւ.

– Ես ալ հայերէն կը խօսիմ:

Ըսի.

– Ուրեմն դո՞ւն ալ հայ ես:

Ըսաւ.

– Ո՛չ, ես հայ չեմ, ես համշէնցի եմ:

Ասանկ դէպքեր շատ եղած են, իմ ծանօթներս ալ շատ հանդիպած են իսլամ հայերու, մանաւանդ, համշէնցի հայերու: Իստամբուլի մէջ համշէնցի շատ կայ, մէկ մասը կ'ուզեն իրենց պատմութիւնը գիտնալ, բայց չիտեն ուրկէ կարդալ:

– **Մեր թերթը բազմիցս անդրադարձել է մահմեդական համայնքներին, բայց, ցաւօք, նրանք հայերէն գրել-կարդալ չգիտեն:**

Վերապատուելի, շնորհակալութիւն հարցազրոյցի համար, Ձեզ մաղթում եմ ամենայն բարիք:

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Ձու՛մ հուրիթի» թղթակից Ուֆուք Գիւլդեմիրը իր «Անատոլիայի հայ հայրենակիցները» հետաքրքրական յօդուածաշարում, 1981 թ. օգոստոսի 12-16-ին, յետ-յեղաշրջման շրջանի շատ թարմ պատկերացումներ է տալիս գաւառի հայութեան մասին⁵³: Նա ասուլիս վարելով մի շարք «պաշտօնական» եւ «թաքուն» հայերի հետ հետաքրքիր համեմատութիւնների եւ եզրակացութիւնների է յանգում: Այսպէս, օրինակ, նա ասում է, որ եթէ Վիրանշեհի-րի հայերը դժարութիւններ ունեն կրօնական ազատութեան իմաստով, Մալաթիայում ապրող 20 տուն հայութիւնը «գերծ» է այդպիսի մտահոգութիւններից: Մալաթիայի հայերը, ըստ Գիւլդեմիրի, Ադիեման-մի հայերի պէս միմիայն «աղջիկ առնելու, տալու հարց» ունեն⁵⁴: Նրա վարած ասուլիսներից պարզուրում է նաեւ, որ 700 տուն հայութիւն ունեցող Կեսարիայում, 1981 թ., հազիւ մնացած են եղել 12 տուն, իսկ շրջակայ գիւղերում եւս մնացել են հայեր:

Պիտի ասել, որ հաւատափոխութեան մարտավարութիւնն էլ լիարժէք չի նպաստել ասիմիլիացիայի քաղաքականութեանը: Սոյն ժամանակահատուածում, թէեւ պետական լայն մասշտաբով վերակիրառուել է իսլամացման հնաւանդ քաղաքականութիւնը, այնուամենայնիւ, դրան համապատասխան չափերով չի իրականացւել թուրքացումը: Այս ուղղութեամբ թուրք մտաւորականութեան որոշակի խաւը լաւապէս իրազեկ էր տեսել մարտավարութեան անճարկութեանն ու ապարդիւնութեանը: «Թուրքիայում ապրող հայերի մեծ մասը թուրքացած հայեր են,- գրում էր Թուրքիայի պատմական գիտութիւնների դոկտ., պրոֆ. Ֆահիր Արմաօղլուն «Թերջումանի» 1988 թ. փետրւարի 17-ի համարում,- այսինքն՝ առանց իրենց ինքնութիւնը կորսնելու, թուրքերի հետ խառնուել են եւ ձերբազատուել են Թուրքիայի նկատմամբ թշնամական զգացումներից»⁵⁵: Ահա պարզուրում է, որ Թուրքիայի պետական շահերի դիտանկիւնից՝ քրդացման, թուրքացման եւ իս-

հուրիթի» թղթակից Ուֆուք Գիւլդեմիրը: Անարկելով Վիրանշեհի քնակող Իւնգեզ անունով հայի ասում է, որ նա շատ քիչ հայերն գիտեր եւ ընդամենը իր գիտցածը 70 տարի առաջ՝ հայկական վարժարանում սովորած մի քանի աղօթքն էր⁵⁶: Ապա Գիւլդեմիրը այդ երեւոյթը թերեւս «բնական» ձեւացնելու, բայց իրականում թուրքացման քաղաքականութիւնը մի կերպ կոծկելու նպատակով շարունակում է այսպէս. «Յայ հայրենակիցները երկար դարեր իսլամների հետ ապրելու այնքան են վարժել, որ իրենց աղօթքին էլ նամագ են կոչում... Արդէն, բացի լեզուից, մեծ տարբերութիւններ չկան երկու նամագների միջեւ: Երկուսն էլ գորգի վրայ ծունկի են գալիս եւ թեւերը դէպի երկինք են բացում...»⁵⁷:

Պրոֆ. Գեղամ Կիրակոսեանն Արեւմտեան Յայաստանի իր ուղեւորութեան յուշերում ասում է. «Այդ ամբողջ օրը մեզ հետ էր նաւավար Ռաջաբը: Ես փորձեցի քրդերէն իմացած իմ մի քանի բառով «գրուցել» նրա հետ ու հասկանալ, թէ ինչու է նա մեր նկատմամբ այդքան ջերմ: Նա բռնեց իմ թելը, ինձ տարաւ կղզու հարաւային կողմ՝ մի բարձր տեղ, եւ ցոյց տուց լճի հարաւային ափին հեռուում երեւացող իրենց գիւղը՝ Շքուրդը՝ պատմական Սոխրաբերդը, եւ ալեկոծած հոգով ասաց, որ ինքը հայ է, եւ իրենց գիւղի բոլոր բնակիչները քրդախօս հայեր են»⁵⁸:

Արտասահմանում հաստատուած եւ բուն անունն ու կրօնը վերականգնած Ռազմիկ Յակոբեանը (նախկինում՝ Նուրեղիկ Եագուբ), որ ծնւել էր ապրել է Ադիեմանում եւ որոշել է էկրանաւորել փաստագրական կիսօ՝ «թաքուն» հայութեան մասին, 2004թ. մանրամասնօրէն նկարագրում է կացութիւնը: «Ծնողներս թաքցնում էին իրենց ծագումը,- ասում է նա,- որովհետեւ հայ լինելը աններելի յանցանք է համարում»⁵⁹:

Քուրդ ղեկավարներ եւս վկայում են «թաքուն» հայերի մասին. «Այն գիւղը, որ գնացի, մօտ մէկ ժամ կամ անէլի հեռու էր մեր գիւղից եւ հայկական շատ հին գիւղերից էր: Հենց այդտեղից պարզուրում էր հայերի իրաւունքների ոտնահարումն ու նրանց նկատմամբ խտրութիւնը, որովհետեւ այդ գիւղի եկեղեցին վերանշէլ էին մգկիթի, այն պայմաններում, երբ դեռ հայ եղբայրները ապրում էին այդտեղ: Յայրս հետաքրքիր եւ ընկերական կապեր ուներ հայ եղբայրների հետ եւ նրանցից շատերի հետ խոր ընկերութիւն էր հաստատել... Այդ խնդիրը արծարծում են, որովհետեւ թուրք ֆաշիստները սնապարծութեամբ ու պոռոտախօսութեամբ ասում էին, որ այլեւս հայ չկայ...»: Ահա այսպէս է արտայայտուում Արդուլլահ Օջալանը թուրք լրագրող դոկտ. Եալչին Քիչիքի վարած մամլոյ ասուլիսի ընթացքում 1990-ականների կէտերին⁶⁰:

Ուրֆայի շրջակայքում գտնուող Ջիբին, Ջիբն կամ Սալակկայա գիւղն այցելել է Մետրոպ արք. Մուրաֆեանը, 2000 թ. յուլիսի 4-ին: Այդ կապակցութեամբ աւելորդ չենք համարում մէջբերել հետեւեալ յուզական տողերը. «Նուրիկ կամ Մուշեղը պատրիարքին իրաւիւրեց իր տունը: Նա կոյր է եղել 4 տարեկանից, եւ հայերն խօսում է մաքրու պղտկական ոճով: Նա ասեց, որ վերջին 75 տարիներում սա առաջին անգամն է, որ հայ պատրիարքը

ուրք է դնում Ջիբն: ... Ծերունին գեղեցիկ ծայր ունէր եւ հիանալի տոնով երգեց Ս. Ներսէսի շարականներից մէկը...»⁶¹:

Ջիբնի թուրքերէն կայքէջի հեղինակները, մատնանշելով Ջիբնի հայկական լինելու հանգամանքը, առանձին տեղ են

աննեն՝ գրքի հրատարակութիւնից յետոյ բազմաթիւ այսպէս կոչուած «թուրքեր» կապել, շնորհաւորել եւ «թախանձագին խնդրել են իրեն», որ նոյնպէս գրի առնի իրենց ընտանիքներում նոյնանման պարագաները՝ հայկական ծագման հետ կա-



Պաուլա Վոլֆերտ



Անատոլիայում ապրող «թաքուն հայերի» ընտանիք:

յատկացրել գիւղի ներկայիս հայ բնակիչներին եւ լուսանկարներով ներկայացրել նրանց. Սաթենիկ, Մարիամ, Ծաղիկ, Ղուկաս եւ Մելինէ անունների կողքին համդիպում ենք նաեւ Իւսուֆ, Ջիբն եւ այլն⁶²:

Պաուլա Վոլֆերտը իր մասնագիտական մի յօդուածում (տպագրուած «Savcur» հանդէսում 1998 թ. մայիս) լայն քննարկման ենթարկելով Թուրքիայի Հարաւ-արեւելեան շրջանների տեղական թխածոները, կերակրատեսակները եւ խոհանոցային հարցերը, ակնարկում է Ջիբն գիւղի բնակիչ Ջելիհա Գունգորէն անունով մի «թաքուն» հայուհու⁶³: Վոլֆերտն ընդգծելով 1915թ. տեղահանութիւններից յետոյ մի խումբ հայերի «ծուլման» պարագան՝ նշում է, որ նրանց շառաւիղների «սեւահեր եւ կապուտաչեայ» Ջելիհայի մանաների գոյատեւման շնորհիւ՝ այսօր «հայկական համ ու հոտ է հաղորդել շրջանի խոհանոցին»⁶⁴:

Իր բաւականին հարուստ տեսլների հիմամբ՝ Քեմալ Եալչինը գերմանական թղթակցի հետ մի հարցազրոյցի ընթացքում դիպուկ բնութագրում է մերօրեայ «թաքուն» հային. «Այդպիսի ընտանիքներն ապրում են որպէս քուրդ կամ թուրք մուսուլմաններ եւ նրանց երեխաներն իրենց մայրենի լեզուն չեն սերտում: Ինչ տեսած թաքուն հայերից շատերը 15-17 տարեկաններ էին, որոնց ծնողները նրանց զգուշացրել էին չխօսել այդ մասին»⁶⁵:

«Թաքուն լինելու», «խնամքով թաքցնելու» մտակեցածքն ինքնին բարդ եւ անըմբռնելի կենսափոխապայտութիւն է. թէ ինչպէս կարելի է ամբողջ կեանքի տեւողութեամբ ծածկելով, կեղծելով, ամօթի ու վախի զգացումներից տառապելով եւ հոգեմտաւոր ներքին պակասութիւնների բռնելով, ի վերջոյ, պահպանել ինքնութիւնը եւ կյանքը ինքնակազմ պատկանելութեան ներաշխարհ... եւ էականն այն է, որ այդ փոխանցել յետնորդներին:

2005թ. փետր. 5-ին, Կ. Պոլսի «Եափը վէ քրեդի» բանկի դահլիճում, «Հայկական հարցը Թուրքիայում» միթով բանախօսական ելոյթ է ունեցել տազնապայարոյց «Աննաեաններ» (մեծ մայրս) գրքի հեղինակ Ֆեթիլէ Չեթինը: Նա մեծ յանդուութեամբ է խօսել բոլոր այն անիրաւութիւնների մասին, որոնք գործարկուել են հայութեան դէմ⁶⁶: Նա յիշելով իր հայ մեծ մօրը՝ պատմել է, որ ինչպէս իր «Աննաե-

պակցաբար: Այս իմաստով շահեկան ենք համարում «իսլամացած» եւ «թաքուն» հայի հոգեկան ներաշխարհի մի շատ էական երեսը վեր հանել այդպիսիների լեզուով. «Մենք երկու «ես» ունենք՝ ներքին եւ արտաքին,- ասել է իրաւաբան Ֆեթիլէ Չեթինը իր բանախօսութեան ընթացքում,- այս երկրում երբեք չենք կարող մեր երկու «ես»-երը միացնել եւ ներկայանալ որպէս մէկ «ես» ունեցող անձ...»⁶⁷:

- 46. Ալիք, 1952, սեպտեմբերի 14-17:
- 47. Քեմալ Ե., Հոգիս քեզմով կը խայտայ, թարգմանեց Գարեգին արք Պեքճեանը, Երեւան, 2003, էջ 306-307:
- 48. Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան, 1977, թիւ 1(76), էջ 256:
- 49. Քեմալ Ե., Հոգիս քեզմով կը խայտայ, Երեւան, 2003, էջ 346:
- 50. Նոյն տեղում:
- 51. Hofmann T., Armenians in Turkey today, October 2002, p. 18.
- 52. Գասպար Ա., Հայ ազատագրական պայքարն ու սիւրբեկութիւնը, Թարգմանեց եւ խմբագրեց Արմէն Տօնոյեանը, Լուս Անցելեա, 1989, էջ 112:
- 53. Ալիք, 1981, դեկտեմբերի 9:
- 54. Նոյն տեղում:
- 55. Նոր Մարմարա, 1988, փետրւարի 17:
- 56. Ալիք, 1981, դեկտեմբերի 9:
- 57. Նոյն տեղում:
- 58. Կիրակոսեան Գ., Հողի ու արեան կանչով, տասն օր Արեւմտեան Յայաստանում, Եր., 2001, էջ 32:
- 59. Thousands Of Turkified Armenians Revert To Their Roots, PanArmenian News, jan 19, 2005 www.panarmenian.net/news/eng/?task=society&id=11935&date=2005-01-19.
- 60. Եալչին Բ., Վերապրումի պատմածք, Արդուլլահ Օջալանի յուշերն ու մտորումները (պատկերներ), Թեհրան, 1999, էջ 48 եւ 49:
- 61. oons-request@uk-christian.net, 2000, յուլիսի 12:
- 62. <http://www.cibin.de>
- 63. <http://www.paula-wolfert.com/articles.html>.
- 64. Նոյն տեղում:
- 65. Kemal Yalcin, Armenians In Turkey: The silence broken through?, 22.1.2002, http://www.nadir.org/nadir/initiativ/kurdi-almankassel/aktuell/2002/jan2002/ armenier_tr.htm.
- 66. Նոր Մարմարա, 2005, փետրւարի 7:
- 67. Նոյն տեղում:



Դիարբեքիի Կ. Կիրակոս եկեղեցու մոտ ապրող մի հայ կին:

լամացման յաջորդական քաղաքականութիւններից եւ ոչ մէկը չի տւել ցանկալի արդիւնքներ պատմական երկար վազքի վրայ ...

«Թաքուն հայ» երեւոյթի արտաքին դրսեւորման վերաբերեալ հետաքրքրական պատկեր է տալիս դարձեալ «Ձում-

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-քաղաքական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան, Ա. Իսահակյան 18: Հեռախոս՝ (+374+10) 25 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Ձայն համաշխարհային» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից: «ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 25 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 25 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com